

**ՔԱՂԱՔԱՅԻՎԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Աբրահամ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ

Սույն հոդվածում կքննարկենք մասնագիտական գրականությունում մեծ տեղ զբաղեցրած մի հիմնախնդիր՝ քաղաքացիական իշխանություններ – ռազմական ինստիտուտ (քի-ռի) հարաբերությունների տիպաբանությունը, որն անմիջականորեն կապված է երկրի ժողովրդավարացման ու կոնսոլիդացման հարցի հետ: Այս առումով կխոսենք քի-ռի հարաբերությունների վերաբերյալ գիտնականների շրջանում առաջ քաշված հիմնական տեսությունների մասին:

Զինյալ ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը համարվում է ներքաղաքական գործընթացների և միջինստիտուցիոնալ հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից մեկը: Ռազմական ինստիտուտի նկատմամբ սահմանված վերահսկողությունը պետք է անպայման հաշվի առնվի ժողովրդավարական քաղաքական համակարգ և քաղաքացիական հասարակություն կառուցելիս: Այս հարցը զրավել է անցումնաբանության հարցերով զբաղվող քաղաքագետների և արևմտյան քաղաքական մտքի ներկայացուցիչների ուշադրությունը 1980-ականներից՝ Արևելյան Եվրոպայի երկրներում կոմունիստական վարչակարգի փլուզման ժամանակներից: Եվ որպեսզի ռեալ պատկերացում կազմենք այս խնդրի մասին, անհրաժեշտ է անդրադառնալ քի-ռի հարաբերությունների մի քանի տեսությունների: Թեև դրանք բազմաթիվ են, սակայն այս հոդվածում առանձնացրել ենք մի քանի տեսություններ, որոնցում ներկայացված է այն պատկերը, թե ինչպես պետք է քաղաքացիական իշխանությունները և հասարակությունը զսպի իշխանության տարածման մոլուցքից տառապող այս ինստիտուտի գործունեությունը, և ինչպես է հնարավոր սահմանափակել զինյալ ուժերի միջամտությունը երկրի ներքաղաքական գործընթացներին: Նշյալ հիմնախնդրով զբաղվող քաղաքագետներից և սոցիոլոգներից առանձնացրել ենք Սենոել Չանթինգթոնի և Մորիս Ջանովիցիի, որոնք համարվում են քի-ռի հարաբերությունների տեսության մշակման հիմնադիր հայ-

րերը: Կանդրադառնանք նաև այս հարցում իրենց լուրջ ներդրումն ունեցած մի շարք գիտնականների՝ Պիթեր Ֆեվերի, Ռեբեկա Շիֆի, Էնդրյու Քոթիի աշխատություններում արտացոլված մտքերին:

**Հանթինգթոնի նորմատիվ տեսությունը**

Ամերիկյան Հարվարդի համալսարանի քաղաքագետ Հանթինգթոնի «*The Soldier and the State*» աշխատությունը (1957) համարվում է դասական գլոխգործոց քաղաքացիական իշխանություններ-ռազմական ինստիտուտ հարաբերությունների հիմնախնդրով զբաղվող մասնագետների համար: «Նրա աշխատությունը աննախադեպ բուժում է տալիս քի-ռի հարաբերություններին՝ որպես քաղաքական երևույթի ուսումնասիրության առանձին և տարբեր կատեգորիա»<sup>1</sup>: Ըստ Լարսոնի՝ «Զինվորը և պետությունը» աշխատության հիմնական թեմաները մեծ ազդեցություն են գործել այս հարցում փիլիսոփայական և ռազմական դիրքորոշումների և տեսակետերի վրա<sup>2</sup>: Իսկ քաղաքագետ Քոֆմանի կարծիքով՝ Հանթինգթոնն այդ աշխատությամբ լեգիտիմացրեց «Միացյալ Նահանգների զինվորական պատմության ակադեմիական մոտեցումը»՝ հենք տրամադրելով «ամերիկյան ռազմական ինստիտուտի հոլովույթին», որը տարբերվում է պատերազմների և ղեկավարների ներկայացման հարցում ընդունված «խորոնիկ մոտեցումներից»<sup>3</sup>:

Հանթինգթոնի նորմատիվ տեսությունն անկյունաքարային է քի-ռի հարաբերությունների տեսություններում: Այդ հարցում նրա ինստիտուցիոնալ դիտարկման մոդելն ընդունված է համարել «ամենահավակնոտն ու ամենակարևորը» քի-ռի հարաբերություններում<sup>4</sup>:

Հանթինգթոնի տեսության հիմնական և «բանալի» նպատակը զինվորականների նկատմամբ քաղաքացիական իշխանությունների վերահսկողության (կառավարման) իրականացումն է: Այս տեսությունը ենթադրում է, որ քաղաքացիական ղեկավար-

<sup>1</sup> Larson, Arthur D. 1974. Military professionalism and civil control: a comparative analysis of two interpretations. *Journal of Political and Military Sociology* 2 (Spring), 60.

<sup>2</sup> Տույն տեղում, 72:

<sup>3</sup> Coffman, Edward M. 1991. The long shadow of the soldier and the state. *Journal of Military History*, 169.

<sup>4</sup> Feaver, Peter D. 2003. *Armed servants: agency, oversight, and civil-military relations*. Cambridge, MA: Harvard University Press, 7.

ները պետք է տնօրինեն զինվորականների՝ անվտանգության քաղաքականությունը, սակայն չպետք է միջամտի լինեն նրանց անկախությանն այն հարցում, թե «իմջպիսի զինվորական գործողություններ են պետք՝ ապահովելու այդ քաղաքականության նպատակների իրականացումը»<sup>5</sup>: Նա ապացուցում է, որ «*օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության*» նվաճմամբ հնարավոր կդառնա հավասարակշռել «քաղաքական իշխանության բաժանումը» քաղաքացիական և զինվորական ուղորտներում<sup>6</sup>: Նա բացատրում է, որ օբյեկտիվ վերահսկողությունը ստեղծում է քի-ռի այնպիսի համակարգ, որը կմեծացնի զինվորականների անվտանգությունը՝ «ի զին սոցիալական այլ արժեքների նվազագույն զոհողության»<sup>7</sup>: Օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունն ապահովում է «ռազմական արհեստավարժության անկախության ճանաչումը»<sup>8</sup>: Նման համակարգում, որտեղ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողություն է սահմանվում, զինվորականներն ի վիճակի են լինում հաղթանակով պսակել պետության շահերի իրականացումը, մինչ քաղաքացիականները կմատնանշեն և կընդգծեն այդ նպատակները: Այլ խոսքով՝ զինվորականները պարտավոր են ենթարկվել քաղաքացիական իշխանության որոշումներին, սակայն վերջիններս պետք է վստահեցնեն, որ զինվորականներն ունեն ինքնավարություն՝ ռազմական հարցերում: Օրինակ, քաղաքացիականները զինվորականներին հրահանգներ չեն տալիս, թե ռազմական օպերացիայի ժամանակ ինչքան զինվոր է անհրաժեշտ: Եվ ինչպես արհեստավարժ հրամանատարական կազմը, այնպես էլ զինվորներն ընդունում են իրենց ստորադասությունը քաղաքացիական իշխանություններին: Այսպիսով, ռազմական սպաները պետք է քաղաքական չեզոքություն պահպանեն, իսկ այդ կեցվածքը նրանց պրոֆեսիոնալիզմի մասն է կազմում: Հանթինգթոնի տեսության համաձայն՝ պետության առաջնահերթությունը քաղաքացիների ազատությունների և իրավունքների պաշտպանությունն է<sup>9</sup>, որովհետև հասարակությունը կարիքն ունի նման պաշտպանության՝ իր նպատակների իրագործման համար:

Հանթինգթոնն իր տեսության հիմնավորման համար օգտագործում է Հոբսի լիբերալ տեսությունը: Նա վերջինիս նման ենթադրում է քաղաքացիների և

պետության միջև սոցիալական պայմանագրի ստորագրումը<sup>10</sup>: Սոցիալական պայմանագիրն ընդգծում է, որ կառավարության նպատակը քաղաքացիների հիմնարար իրավունքների՝ ապրելու, ազատության և երջանիկ լինելու ապահովումն ու պաշտպանությունն է:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Հանթինգթոնի ուսումնասիրության շարժառիթը, Ամերիկայի քի-ռի հարաբերությունների աղմուկը կոնֆլիկտի արդյունք էր իր «*Ֆունկցիոնալ հրամայականի*» («արտաքին վտանգի աստիճանը») և իր «*սոցիալական հրամայականի*» («պետության սահմանադրական կառուցվածքն ու հասարակության գաղափարայնացումը») միջև և պայմանավորված էր Սառը պատերազմով<sup>11</sup>: Ֆունկցիոնալ հրամայականը՝ խորհրդային միության սպառնալիքը, պահանջեց, որ Միացյալ Նահանգները հզոր ռազմական «խթելիչներ» ունենա: Սակայն, այնուամենայնիվ, սոցիալական հրամայականը (ավանդական լիբերալ, հակառազմական գաղափարախոսությունը) կանխեց ռազմական ուժի թվաքանակի ավելացումը<sup>12</sup>: Քաղաքագետը գտնում է, որ եթե լիբերալ հասարակությունը ժամանակավորապես կանխի իր ազատական գաղափարախոսությունը և «զինվորականների նկատմամբ ժամանակավոր վերահսկողություն» իրականացնի, ապա նա կարող է իրեն պաշտպանել երկարաժամկետ արտաքին սպառնալիքից<sup>13</sup>: Հանթինգթոնը պնդում է, որ «ռազմական անվտանգության պահանջների և ամերիկյան լիբերալիզմի արժեքների միջև լարումը կստեղծվի միայն երկու դեպքում՝ թուլացնելով անվտանգության սպառնալիքը կամ թուլացնելով լիբերալիզմը»<sup>14</sup>: Ըստ նրա՝ լիբերալիզմի ավանդույթը եղել է «Ամերիկայի ռազմական անվտանգության ամենավտանգավոր ներքին սպառնալիքը»<sup>15</sup>: Այդ նպատակով էլ Հանթինգթոնն առաջարկում է փոփոխության ենթարկել գաղափարախոսական շրջանակները՝ երկար ժամանակի կտրվածքով դիմակայելու խորհրդային Միության սպառնալիքին<sup>16</sup>:

Վերոնշյալն ավելի պարզաբանելու համար Հանթինգթոնը փաստում է, որ հասարակության ռազմական ինստիտուտները ձևավորվել են երկու գործոնների շնորհիվ. «*Ֆունկցիոնալ հրամայականի*, որն արդյունք է հասարակության անվտանգության

<sup>5</sup> Burk, James. 2002. Theories of democratic civil-military relations. *Armed Forces & Society* 29(1), 10:

<sup>6</sup> Huntington, Samuel P. 1957. *The soldier and the state: theory and politics of civil-military relations*. New York: Vintage Books, 83:

<sup>7</sup> Նույն տեղում, 2:

<sup>8</sup> Նույն տեղում, 83:

<sup>9</sup> Burk 2002, 12:

<sup>10</sup> Նույն տեղում, 16:

<sup>11</sup> Feaver 2003, 16-17:

<sup>12</sup> Feaver 2003, 17:

<sup>13</sup> Նույն տեղում, 17:

<sup>14</sup> Huntington 1957, 456:

<sup>15</sup> Նույն տեղում, 457:

<sup>16</sup> Նույն տեղում, 457:

սպառնալիքի և սոցիալական հրամայականի, որն էլ իր հերթին առաջացել է հասարակությունում գերակայող դեր ունեցող սոցիալական ուժերից, առկա գաղափարախոսություններից և ինստիտուտներից»<sup>17</sup>: Նա ընդգծում է, որ ռազմական ինստիտուտները մտածում են, թե սոցիալական արժեքները գուցե անզոր են՝ արդյունավետորեն իրականացնելու իրենց ռազմական գործառույթները<sup>18</sup>: Այնուամենայնիվ, ըստ նրա, հնարավոր չի լինի հասարակությունում ձևավորել ռազմական ինստիտուտները՝ «միմիայն հիմնվելով ֆունկցիոնալ հրամայականների վրա»<sup>19</sup>: Քաղաքագետը գտնում է, որ վերոնշյալ երկու գործոնների փոխհարաբերակցությունը կազմում է քաղաքացիական իշխանություններ-ռազմական ինստիտուտ հարաբերության հիմնախնդրի կորիզը:

Հանթինգթոնի տեսությունը փորձում է լուծել քիռի հարաբերությունների այս դիլեման «օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության» քաղաքականության իրագործմամբ<sup>20</sup>: Ըստ Բըրքի՝ այդ քաղաքականությունը ետ է պահում քաղաքացիական իշխանություններին զուտ զինվորական խնդիրներին միջամուխ լինելուց, իսկ զինվորականներին հեռու է պահում քաղաքականությունից:

Ամփոփելով միտքը՝ ասենք, որ Հանթինգթոնի նորմատիվ տեսությունն առաջարկում է զինվորականների գործունեության նկատմամբ այնպիսի վերահսկողություն, որը կլինի նպատակային և օբյեկտիվ, որտեղ այդ «մեխանիզմը» կենթադրի քաղաքացիականների կողմից նպատակների սահմանում, իսկ զինվորականների կողմից՝ խոհեմություն և զգուշություն այդ նպատակների իրականացման գործում: Եվ մինչ Հանթինգթոնը հավատում է, որ ռազմական ինստիտուտի ղեկավարները պետք է լինեն անկախ և քաղաքականապես չեզոք, միաժամանակ մտահոգություն է հայտնում, որ «հաղթանակի նվաճման» հոգեվիճակը զինվորականների մոտ պատճառ է դառնում, որ նրանք ուշադրություն չդարձնեն ոչ ռազմական խնդիրներին ու հասարակական նորմերին<sup>21</sup> և չմտահոգվեն վերջիններով:

Մյուս կողմից, սակայն, Մորիս Ջանովիցը պաշտպանում է «քաղաքականապես ոյուրազգաց ռազմական մասնագիտությունը», որը ինտեգրվել է հասարակությանը և սահմանափակ ուժ է գործադրում՝ զարգացած միջազգային հարաբերություններ կա-

ռուցելու համար<sup>22</sup>:

### Մորիս Ջանովիցի Քաղաքացիական հանրապետական տեսությունը

Մորիս Ջանովիցին ընդունված է համարել ռազմական սոցիոլոգիայի և Ջինված ուժերի ու հասարակության միջհամալսարանական գիտաժողովին պատկանող «*Armed Forces & Society*» միջազգային հեղինակավոր պարբերականի հիմնադիրը: Այսպիսով, ինչպես նշում է Ֆեվերը, նա Ամերիկայի քիռի հարաբերությունների տեսության երկրորդ հիմնասյունն է Հանթինգթոնից հետո<sup>23</sup>: Ջանովիցի «Արիեստավարժ զինվորը» աշխատությունը (1960 թ.) համարվում է ռազմական ինստիտուտների «առաջատար և համընդհանուր սոցիոլոգիական քննական առարկան»<sup>24</sup>: Նա ռազմական համակարգին նայում է որպես «սոցիալական համակարգ», որտեղ հրամանատարական կազմի արիեստավարժ ներկայացուցիչները որակական փոփոխության են ենթարկվում ժամանակի ընթացքում և ուժի կիրառման ու վերահսկողության հատկանիշների հետ մեկտեղ նրանք ծեռք են բերում հմտություններ և արժեքներ: Բացի այդ, Ջանովիցը պնդում է, որ զինվորականները դառնում են «**ոստիկանական ստորաբաժանումներ (constabulary)**» և մասնակցում են արդարացված ուժի գործողման գործընթացին՝ աջակցելու «կենսունակ միջազգային հարաբերություններին», որտեղ «հստակ տարանջատում չկա պատերազմի և խաղաղության կամ ռազմական ու քաղաքական գործողությունների միջև»<sup>25</sup>: Սոցիոլոգը, սակայն, նշում է, որ այդ ստորաբաժանումները պետք է վերածվեն ոչ թե «ոստիկանության համակարգի», այլ այնպիսի ուժի, որը մտահոգված կլինի խաղաղության պահպանմամբ, ինչպես նաև պատրաստված կլինի պատերազմի<sup>26</sup>:

Ֆեվերը, իր հերթին, համեմատության ենթարկելով Հանթինգթոնի և Ջանովիցի տեսությունները, նկատում է, որ վերջինս չի ընդունում «աշխատանքի իդեալական բաժանման» սկզբունքը, որը, ըստ Հանթինգթոնի, անհրաժեշտ ատրիբուտ է ռազմական արիեստավարժության հարցում<sup>27</sup>: Իրականում, ըստ Ֆեվերի, Ջանովիցը ապացուցում է «ռազմական

<sup>17</sup> Huntington 1957, 2:

<sup>18</sup> Նույն տեղում, 2:

<sup>19</sup> Նույն տեղում, 2:

<sup>20</sup> Burk 2002, 10:

<sup>21</sup> Larson 1974, 60:

<sup>22</sup> Նույն տեղում, 60:

<sup>23</sup> Feaver, Peter D. 1996. The civil-military problematic: Huntington, Janowitz, and the question of civilian control. *Armed Forces & Society* 23(2), 164:

<sup>24</sup> Larson 1974, 61: Այս գրքում հեղինակը փորձնական ուսումնասիրության է ենթարկում ռազմական համակարգի «ինստիտուցիոնալ կյանքը»՝ մեկ ամբողջական կերպարի մեջ վերցնելով ռազմական ինստիտուտը և այդ ամբողջական պատկերն օգտագործում է՝ այնպիսի փոփոխություններ առաջարկելու, որոնք «կարտոնեն» ռազմական ինստիտուտին հաղթահարել դժվարությունները՝ հանուն անվտանգության և քաղաքացիական վերահսկողության ապահովման:

<sup>25</sup> Larson 1974, 61:

<sup>26</sup> Նույն տեղում, 62:

<sup>27</sup> Feaver 1996, 164:

ինստիտուտի քաղաքականացման անխուսափելիությունը»՝ հաշվի առնելով ԱՄՆ-ԽՍՀՄ մրցակցության կարևորությունը թե՛ միջազգային և թե՛ ներքին քաղաքականության համար<sup>28</sup>:

Ձանովիցը նաև քննության է առնում Դանթինգթոնի «Ֆունկցիոնալ հրամայականը», որը, ըստ Ֆեվերի, «ռազմական-տեխնիկական սպառնալիքի շրջանակն է»: Նա գտնում է, որ զինվորականները պարտավոր են պատրաստ լինել՝ իրականացնելու թե՛ ռազմավարական զսպում և թե՛ սահմանափակ պատերազմական գործողություններ: Սա ստեղծում է նոր ռազմական գործառույթ և «նոր իդեալական ռազմական» մի կոնցեպցիա՝ «*ոստիկանական ստորաբաժանման կոնցեպցիան*»<sup>29</sup>: Ըստ Ձանովիցի՝ «ռազմական «խթեբլիչնընթը» դառնում է «ոստիկանական ստորաբաժանում», երբ շարունակաբար պատրաստ է լինում գործադրել նվազագույն ուժ և երբ հաղթանակի փոխարեն փնտրում է կենսունակ միջազգային հարաբերություններ»<sup>30</sup>: Ձանովիցի այս կոնցեպցիայի համաձայն՝ պատերազմի և խաղաղության միջև տարանջատող տարբերությունները վերանում են և «ռազմական ինստիտուտի ներկայացուցիչներն իրենց ներշնչող ուժն ստանում են ավելի շատ ոստիկանական սպայի գաղափարից, քան պատերազմողից»<sup>31</sup>: Այս բոլորով հանդերձ, Ձանովիցը զգուշությամբ է մոտենում այն հարցին, որ գործողությունների հրապարակը պետք է լինի միջազգայինը, այլ ոչ թե՛ ներքինը: Գիտնականը միաժամանակ ահազանգում է հնարավոր սցենարի զարգացման մասին. ռազմական ինստիտուտի քաղաքականացումը ձեռնոց է նետում «քաղաքացիականների գերիշխանությանը»<sup>32</sup>: Նա մտահոգություն է հայտնում, որ ոստիկանական ստորաբաժանումների կարգավիճակին աստիճանական անցումը կարող է պատճառ դառնալ զինվորական մեծ Ֆրոնտաբաժանի<sup>33</sup>: Ըստ Ձանովիցի՝ «ոստիկանական ստորաբաժանումների կոնցեպցիան մշակվել է՝ թե՛ ընդգծելու ռազմական ինստիտուտի պրոֆեսիոնալիզմը, թե՛ կանխելու Ֆրոնտաբաժանի կործանիչ զգացումը»<sup>34</sup>:

Ֆեվերը հավաստում է, որ քի-ռի հիմնախնդրում Ձանովիցի ամենաարժեքավոր ներդրումը կայանում է նրա այն փաստարկում, թե՛ ինչպես է Սառը պատերազմի ժամանակաշրջանի քաղաքականացված

զինվորականությունը փորձում ազդեցություն գործել քաղաքացիական իշխանությունների վրա և ընդդիմանում անցանկալի քաղաքականության մոտեցումների դրսևորմանը: Բացի այդ, ըստ Ձանովիցի, քաղաքացիները և քաղաքացի-զինվորները «քաղաքացիական հասարակության արտացոլումն են». այն գործում է շարքերի համալրման և անդամահավաքի սկզբունքով՝ խոստանալով ուսում և ռազմական փորձառություն պրոֆեսիոնալ կարիերայի համար: Ձանովիցը հավատում է, որ քաղաքացիները և քաղաքացի-զինվորները պետք է մասնակցեն հանրային կյանքին՝ հանուն հասարակական շահերի:

### Ֆեվերի գործակալների տեսությունը

Ֆեվերի տեսությունը, ըստ որոշ մասնագետների, համարվում է ժամանակակից տեսություն և այլընտրանք է հանդիսանում Դանթինգթոնի նորմատիվ տեսությանը: Ֆեվերը ապացուցում է, որ հենց «քաղաքացիական ղեկավարները» և «զինվորական գործակալները» հարաբերվեն և փոխազդեցություն գործեն միմյանց վրա, նրանք կզարգացնեն քաղաքացիական իշխանություններ-ռազմական ինստիտուտ հարաբերությունների էությունը<sup>35</sup>: Այլ խոսքով, նա հավատում է, որ ռազմական գործակալները և քաղաքացիական ղեկավարները «ռազմավարական փոխազդեցության խաղի մեջ են»<sup>36</sup>: Ականավոր քաղաքագետը փորձում է ի մի բերել ուսումնասիրությունները, թե՛ ինչպես են զինվորականները ենթարկվում «մոնիթորինգի»<sup>37</sup>: Նրա «*լիսավոր թործակալի տեսությունը*» համատեղում է երկու գլխավոր հարցեր՝ «ինչպե՞ս են զինվորականները ենթարկվում մոնիթորինգի, և ո՞րն է այն սահմանը, որտեղ հատվում են ղեկավարների և գործակալների առաջնահերթությունները»<sup>38</sup>: Ֆեվերը նաև երրորդ հարց է առաջադրում. «ինչպե՞ս է դրսևորվելու գործակալների վարքը, երբ իմանան, որ իրենց ձեռնարկած գործերի ծախողման բացահայտման դեպքում պատժվելու են»: Նա գտնում է, որ քի-ռի հարաբերությունները վերլուծելիս պետք է անտեսել պատժի ենթարկվելու ենթադրությունը: Ըստ նրա՝ քաղաքացիական ղեկավարի և ռազմական գործակալի միջև կա համաձայնագիր՝ քաղաքացիների շահերի պաշտպանության հարցում ուժի գործադրման որոշակի աստիճանի գործադրման վերաբերյալ<sup>39</sup>: Եվ երբ այս համաձայ-

<sup>28</sup> Նույն տեղում, 156:

<sup>29</sup> Նույն տեղում, 178:

<sup>30</sup> Janowitz, Morris. 1960. *The professional soldier*. Glencoe, IL: Free Press, 418:

<sup>31</sup> Feaver 1996, 172:

<sup>32</sup> Feaver 1996, 173:

<sup>33</sup> Նույն տեղում, 164:

<sup>34</sup> Janowitz. 1960, 435-234:

<sup>35</sup> Feaver 2003, 2:

<sup>36</sup> Նույն տեղում, 58:

<sup>37</sup> Նույն տեղում, 56:

<sup>38</sup> Նույն տեղում, 56:

<sup>39</sup> Նույն տեղում, 27:

նագիրն ի գործ է դրվում, քաղաքացիական ղեկավարը դիտարկման է ենթարկում ռազմական գործակալի գործունեությունը՝ տեսնելու, թե արդյոք նա հետևողականորեն իրականացնում է քաղաքացիական իշխանությունների հրամանները: Այսպիսով, ըստ Ֆեվերի, քաղաքացիական ղեկավարին հնարավորություն է ընձեռվում ոչ միայն մոնիթորինգի ենթարկել գործակալի գործողությունները, այլ նաև վերահսկել նրա գործելաճը՝ նվազեցնելով նրանց կողմից իշխանության չարաշահման ռիսկը: Իր «Չինվորական ծառայողներ» (2003) աշխատությունում Ֆեվերը ներկայացում է «աշխատելու» և «աշխատանքից խուսափելու» գաղափարները: Երբ զինվորականությունը խուսափում է կատարել իր պարտականությունները և իրեն վստահված պատասխանատվությունը, քաղաքացիականները կորցնում են վերահսկողությունը: Բացի այդ, ըստ Ֆեվերի, պարտականություններից խուսափելու հիմնախնդիրն առաջանում է, որովհետև «քաղաքացիական իշխանություններն ու զինվորականներն անհամաձայնություններ են ունենում նպատակներին հասնելու առնչությամբ միջոցների հարցում»<sup>40</sup>: Ղեկավարներ-գործակալներ անհամաձայնությունները կարող են նաև առաջանալ նպատակների տարբերությունից, որն արդյունք է երկուսի իշխանության և քաղաքական համակարգում իրենց վերապահված դերերի օբյեկտիվ տարբերությունների<sup>41</sup>: Ֆեվերը նշում է, որ եթե քաղաքացիական ղեկավարն ամբողջությամբ տեղեկացված լինի գործակալի գործունեությունից, ապա վերջինիս աշխատանքը կհամարվի «իդեալական կառավարում»<sup>42</sup>: Ըստ Ֆեվերի՝ «աշխատանքը» նշանակում է, որ գործողություններն ընթանում են քաղաքացիականների ցանկություններին համապատասխան, իսկ «աշխատանքից խուսափելը»՝ գործակալների ցանկություններին համապատասխան, որը հակասում է առաջինների ուղղում: Նա «աշխատանքից խուսափում» արտահայտությունն օգտագործում է՝ ներկայացնելու այնպիսի վարքագիծ, ինչպիսին է պարտականությունների չկատարումը, գողությամբ զբաղվելը, անհնազանդությունը, պատերազմական գերիների հետ վատ վարվելակերպը կամ նույնիսկ զենք չմաքրելը<sup>43</sup>:

Պարտականությունների կատարումը և չկատարումն ունեն տարբեր երեսներ, որովհետև, ըստ Ֆեվերի, «քաղաքացիականների ցանկություններն են բազմաերես»: Քաղաքացիականները ցանկանում են

«պաշտպանված լինել արտաքին թշնամուց» և «վերահսկել սեփական քաղաքական ճակատագիրը»<sup>44</sup>: Ֆեվերն այս առաջին ցանկությունը համատեղելի է համարում Յանթինգթոնի «ֆունկցիոնալ հրամայականին», իսկ երկրորդը՝ «հարաբերական»: Չինվորական գործակալը կարող է այնպիսի վարք դրսևորել, որը կհակասի ֆունկցիոնալ և հարաբերական նպատակներին: «Նշյալ երկու գործողություններին հակադրվելը համարվում է պարտականություններից խուսափում»<sup>45</sup>, - ասում է նա:

Ըստ Ֆեվերի՝ ֆունկցիոնալ նպատակը կհամարվի իրականացված, եթե զինվորականները հետևում են քաղաքացիականների կարգադրություններին, եթե նրանք ամեն ինչ անում են՝ բարձր մակարդակով իրականացնելու քաղաքացիականների որոշումները և եթե զինվորականներն ընդունակ են իրականացնել քաղաքացիականների որոշումները: Մյուս կողմից, ըստ հեղինակի, հարաբերական նպատակը կհամարվի իրականացած, եթե քաղաքացիականները միակ էական քաղաքական որոշումներ ընդունողներն են և եթե ընդունված որոշումներն իրական են<sup>46</sup> (Ֆեվերն օգտագործում է «ինքնուրույն» բառեզրը):

Չեղինակը նշում է, որ պարտականություններից խուսափելու ծայրակետը ռազմական հեղաշրջման մտավախությունն ու վտանգն է, իսկ պարտականությունների կատարման վերջնակետը՝ «իդեալական ռազմական ինստիտուտի» ձևավորումը, որը վճռականորեն կատարում է ցանկացած քաղաքացիական հրահանգ և, իհարկե, առանց կոռումպացվելու<sup>47</sup>: Ֆեվերը ընդգծում է մի կարևոր փաստ. ռազմական ինստիտուտում «խորհրդակցականների» առկայությունը խոչընդոտում է պարտականություններից խուսափելու կոնցեպցիայի գոյությանը<sup>48</sup>: Ըստ նրա՝ պարտականությունների կատարում չի նշանակում, որ զինվորականները միանշանակորեն և լռակյաց պետք է ի կատար ածեն ցանկացած հրահանգ, որ կտրվի որոշումներ ընդունող քաղաքացիական կառույցի կողմից: Նախատեսված «գործողությունների ծրագրի» հետևանքների մասին քաղաքացիական իշխանությունների հետ խորհրդակցելը մաս է կազմում զինվորականների պարտավորությունների, սակայն, ըստ հեղինակի, կա սահման «գործողությունների ծրագրին խոչընդոտելու և այդ ծրագրի իրականացման համար քաղաքացիականների ջանքերի մերժման միջև»<sup>49</sup>:

<sup>40</sup> Նույն տեղում, 60:

<sup>41</sup> Նույն տեղում, 60:

<sup>42</sup> Նույն տեղում, 61:

<sup>43</sup> Նույն տեղում, 60:

<sup>44</sup> Feaver 2003, 61:

<sup>45</sup> Նույն տեղում, 61:

<sup>46</sup> Նույն տեղում, 61:

<sup>47</sup> Feaver 2003, 62:

<sup>48</sup> Նույն տեղում, 62:

<sup>49</sup> Նույն տեղում, 62:

Չհնվորականները մերթնդմերթ չեն համաձայնում քաղաքացիականների որդեգրած ուղեգծին և այդ կապակցությամբ իրենց մտահոգությունների մասին իրազեկում են նրանց: Նման «իրազեկումները» չպետք է դիտվեն որպես պարտականություններից խուսափում. քաղաքացիականները պարտավոր են հաշվի նստել և արժևորել զինվորականների խորհուրդները: Բացի այդ, ըստ Ֆեվերի, զինվորականների «խորհուրդները» չպետք է դիտվեն որպես խուսափում պարտականություններից:

Այսպիսով, ըստ հեղինակի, պարտականությունների կատարում և խուսափում չի նշանակում հաղթանակ և պարտություն պատերազմի դաշտում<sup>50</sup>: Պատերազմի դաշտում հաղթանակի հասնում են թշնամու դեմ հաջողված գործողությունների վարման արդյունքում<sup>51</sup>: «Մի կողմը կարող է աշխատել (պարտականություններ կատարել)՝ միաժամանակ մնալով պարտված, եթե մյուս կողմն ավելի մեծ ուժ ունի, կամ եթե նպատակային թիրախը սխալ է ընտրված: Եվ, նմանապես, «մյուս կողմը կարող է խուսափել՝ միաժամանակ մնալով հաղթող, եթե թշնամին անկարող է, կամ եթե քաղաքացիականների հանձնարարականները նպատակահարմար չեն անվտանգության տեսակետից»<sup>52</sup>, - գրում է Ֆեվերը:

Հարկ ենք համարում նշել, որ, ըստ Ֆեվերի, քի-

ռի հարաբերություններում ռազմական գործակալների և քաղաքացիական ղեկավարների միջև «ռազմավարական խաղը» սկսում է այն ժամանակ, երբ քաղաքացիականները որոշում են «ինչպես մոնիթորինգի ենթարկել զինվորականներին<sup>53</sup>»: Ըստ հեղինակի՝ զինվորականների նկատմամբ քաղաքացիական իշխանությունների մոնիթորինգի անցկացման հարցը հասկանալու համար անհրաժեշտ է կիրառել «քաղաքացիական շարժառիթի տեսությունը» եւ ոչ թե պատասխանել «ինչպե՞ս է պետք մոնիթորինգի ենթարկել» հարցին: Ֆեվերի **գործակալների մոդելը** պարունակում է ուշագրավ դրույթներ քի-ռի հարաբերությունների վերաբերյալ: Այն համատեղում է քաղաքացիական որոշումները, որոնք նման են «միջամտողական մոնիթորինգի» և զինվորական որոշումները՝ կապված պարտականությունների կատարման և չկատարման, ինչպես նաև այլ ուշագրավ գործոնների հետ, ինչպիսիք են «մոնիթորինգի հետևանքները (զինը)» և «պատժվելու հավանականությունը»<sup>54</sup>:

Քի-ռի հարաբերությունների վերաբերյալ կան նաև այլ տեսություններ, որոնք ավելի բնորոշ են երիտասարդ ժողովրդավարություններին:

#### Conclusion

In this article we illustrate the classic works of civil-military relations, Samuel Huntington's *The Soldier and the State* (1957) and Morris Janowitz's *The Professional Soldier* (1960), which address both military effectiveness and civilian control. Huntington discusses civil-military relations and argues that their nature has an important impact on military effectiveness. However, the manner in which he formulates this relationship is problematic. Janowitz also discusses military effectiveness but it is not clear in his discussion that civil-military relations serves as an explanatory variable for his assessment of what would constitute an effective military. Instead, he bases his argument for a constabulary force on his assessment of the military needs of the United States in the Cold War, and then argues that acceptance of such a role by the military would also have a beneficial impact on the character of civil-military relations and civilian control. In *The Soldier and the State*, one of Huntington's basic methodological assumptions is that it is possible to define an equilibrium called "objective civilian control" that ensures civilian control and maximizes security at the same time. He argues that "In practice, officership is strongest and most effective when it most closely approaches the professional ideal; it is weakest and most defective when it falls short of that ideal". An officer corps is professional to the extent it exhibits the qualities of expertise, responsibility, and corporateness. In addition to enhancing effectiveness, these traits also enhance civilian control because a professional military seeks to distance itself from politics. However, "professionalism" as Huntington defines it is problematic as an adequate indicator of effectiveness.

Janowitz is similarly concerned with both civilian control and the military's ability to fulfill its responsibilities in meeting the security needs of the state. However in contrast to Huntington, Janowitz argues that relying on the creation of an apolitical military in order to ensure civilian control is an unrealistic approach. "In the United States, where political leadership is diffuse, civilian politicians have come to assume that the military will be an active ingredient in decision-making about national security" (Janowitz, 1964: p. 342). Janowitz argues that it is inevitable that the military will come to resemble a political pressure group, and this is not necessarily a problem as long as its activities remain "responsible, circumscribed, and responsive to civilian authority" (Janowitz, 1964: p. 343). One strong guarantee of the maintenance of civilian control is the military's "meaningful integration with civilian values" (Janowitz, 1964: p. 420). Janowitz also advocates other measures for enhancing civilian control, such as increasing legislative oversight, extending civilian control into lower levels of military organizations, and increasing civilian involvement in officer professional education (Janowitz, 1964: p. 439). Yet, as Feaver points out, in the end Janowitz is similar to Huntington in relying on the professional military ethic as the fundamental means for ensuring control (Feaver, 1996b: p. 166). However, like the founding works of Huntington and Janowitz, Feaver's formulation helpfully puts both effectiveness and control at the center of the civil-military relations research agenda.

To this point, the problem of civilian control has drawn more attention. The impact of civil-military relations on military effectiveness deserves a closer look.

<sup>50</sup> Feaver 2003, 64-65:

<sup>51</sup> Feaver 2003, 65:

<sup>52</sup> Մույն տեղում, 65:

<sup>53</sup> Feaver 2003, 99:

<sup>54</sup> Feaver 2003, 112: